Հավելված
ՀՀ կառավարության 2024 թվականի
մայիսի 23-ի N 753-Ա որոշման

1. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՄՆԱԳՐԵՐ

Ընդհանուր նկարագիրը

Առաջարկվող տրանսպորտային միջոցները (այսուհետ՝ փոխադրամիջոց) պետք է լինեն նոր, արտադրված մայր գործարանում, որը հնարավորինս կհամապատասխանի տեխնիկական մասնագրերում նշված ստանդարտներին, չպետք է լինի նախկինում օգտագործված: Փոխադրամիջոցը պետք է հարմար լինի բոլոր կլիմայական պայմաններին՝ ծովի մակերևույթից մինչև 3000 մետր բարձրության վրա շահագործելու համար:

Մատակարարի կողմից առաջարկվող փոխադրամիջոցը պետք է համապատասխանի դրա շահագործման հետ կապված հարաբերությունները կարգավորող միջպետական օրենսդրությամբ նախատեսված, այդ թվում՝ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N 877 որոշմամբ հաստատված «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 018/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին կամ դրանցում կատարված ցանկացած փոփոխությանը՝ հայտը ներկայացնելու պահին (հղումը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=178208):

Երաշխիքային սպասարկումը պետք է իրականացվի Մատակարարի ցանկացած սպասարկման տարածքում: Փոխադրամիջոցի կամ սարքավորման տեղափոխումն իրականացվում է Մատակարարի կողմից՝ իր միջոցների հաշվին:

Չափաբաժին 1 Քանակ 5*

Տեխնիկական մասնագրեր ՏՄ	Պահանջվող ՏՄ
Արտադրման տարեթիվը	2024
Թափքի տեսակը	ՈՒՆԻՎԵՐՍԱԼ
Անիվային ֆորմուլան	Լիաքարշակ 4WD
Անիվային բազա, մմ	2600-2755
Նստատեղեր	5
Շարժիչի մխոցներ/փականները	4-6/16-20
Շարժիչի հզորությունը՝ ձ/ուժ	150-200

Շարժիչի ծավալը, լիտր	2-2.5
Շարժիչի տեսակը	Բենզինային
Բնապահպանական չափորոշիչ	Բնապահպանական դաս 5
Փոխանցման տուփը	Ավտոմատ
Ղեկը	Հիդրավլիկ
Նախընտրելի գույներ	Սպիտակ/մոխրագույնի երանգներ
Երաշխիք	Առնվազն 3 տարի կամ 100,000.0 կմ մատակարարի ք. Երևանում և ՀՀ մարզերում գործող սրահներում՝ տվյալ պահին մատակարարի մոտ գործող սակագներով
Ավտոմեքենայի համալրվածությունը	Բազային

*) **Ծանոթագրություն.** առաջարկվող Փոխադրամիջոցների գումարային գինը չպետք է գերազանցի 80 մլն դրամ գումարը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

23.05.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ